ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

1950 թ. նոյեմբերի 22—24-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովը, նվիրված Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 30-ամյակին։

Նոյեմբերի 22-ի նիստում լսվեց Հայկական ՍՍՌ ԳԱ-ի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը Հայկական ՍՍՌ ԳԱ-ի 1949 թ. գիտա-հետազոտական աշխատանքների արդյունքների և Ակադեմիայի հետագա խնդիրների մասին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցման առթիվ բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին՝ բիմ. գիտ. թեկնածու Ա. Մ. Գասպարյան, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Գ. Հ. Բարաջանյան, Ս. Ս. Կոշտոյանց, Վ. Ի. Իսագուլյանց, Հ. Ռ. Բունիաթյան, Ա. Լ. Շահինյան, Ա. Ռ. Հովհաննիսյան։

Ընդհանուր ժողովը նոյեմբերի 23-ին լսեց ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Մ. Մկրյանի զեկուցումը «Սովետահայ գրականությունը 30 տարում» թեմայով։ Նույն նիստում լսվեցին Հայկական ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ Հ. Բունիաթյանի զեկուցումը «Ցավի և պայմանական ցավային գրգռի ազդեցությունը երիկամների ֆունկցիայի վրա» թեմայով և երկրահանքաբանական գիտությունների թեկնածու Ա. Գեմյոխինի զեկուցումը՝ «Հայաստանի հանքային ջրերը և նրանց օգտագործման հեռանկարները» նյութի մասին։

Ընդհանուր ժողովը իր նոյեմբերի 24-ի առավոտյան նիստում գրաղվեց Հայկական ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամների և թղթակից անդամների ընտրությամբ, ինչպես նաև Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Նախագահության կազմի ընտրությամբ։

Ընդհանուր ժողովի կողմից, փակ քվեարկությամբ, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին՝

1. Իոսիֆյան Անդրանիկ Ղևոնդի— *Ֆիզիկո-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի գծով։*
2. Հարությունյան Նազարետ Խաչատուրի— *Ֆիզիկո-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի գծով։*
3. Դավթյան Գագիկ Ստեփանի— *Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի գծով։*
4. Ներսիսյան Մկրտիչ Գեղամի— *Հասարակական գիտությունների բաժանմունքի գծով։*

Ընդհանուր ժողովի կողմից, բաց քվեարկությամբ, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամներ հաստատվեցին՝

1. Մնջոյան Արմեն Լևոնի— *Ֆիզիկո-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի գծով։*
2. Աղայան Մատուր Պավելի — *Հասարակական գիտությունների բաժանմունքի գծով։*
3. Շահինյան Մարիետտա Սերգեյի— *Հասարակական գիտությունների բաժանմունքի գծով։*

Ակադեմիայի Ընդհանուր ժողովը, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ավ. Իսահակյանի նախագահությամբ, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ վերընտրեց ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Վիկտոր Համազասպի Համբարձումյանին։

Ընդհանուր ժողովը, փակ քվեարկությամբ, ընտրեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության հետևյալ կազմը.

1. Գուլքանյան Վարդան Հովհաննեսի— *ակադեմիկոս-քարտուղար.*
2. Իոսիֆյան Անդրանիկ Ղևոնդի *փոխ-պրեզիդենտ.*
3. Ներսիսյան Մկրտիչ Գեղամի— *փոխ-պրեզիդենտ.*

4. Շահինյան Արտաշես Լիպարիտի— *Ֆիզիկո-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։*
5. Բունիաթյան Հրաչյա Խաչատուրի— *Բիոլոգիական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։*
6. Բաբաջանյան Գուրգեն Հմայակի— *Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։*
7. Հովհաննիսյան Արզար Ռուբենի— *Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։*
8. Հարությունյան Նազարեթ Խաչատուրի— *Նախագահության ակադեմիկոս-անդամ։*

Նոյեմբերի 24-ի երեկոյան նիստում Ընդհանուր ժողովը լսեց Հայկական ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ Ա. Ալիխանյանի զեկուցումը «Հետազոտությունների ներկա վիճակը վարիտրոնների բնագավառում» թեմայի շուրջ, և Հայկական ՍՍՌ ԳԱ-ի թղթակից անդամ Ա. Իոսիֆյանի զեկուցումը՝ «Էլեկտրա-մեքենա-և ապարատաշինության ներկա վիճակն ու հեռանկարները ՍՍՌՄ-ում և գիտական պրոբլեմներն այդ ասպարեզում» թեմայի շուրջը։

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ